ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի Գետափնյա համայնք
(093)306969, getapnya.gyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 նոյեմբերի 2016թվականի N 22-Ն

2016 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 8-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել 22.11.2016թ-ի ավագանու թիվ 8-րդ նիստի հետևյալ օրակարգը

1. Գետափնյա համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին

2.Գետափնյա համայնքի 2017թ-ի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին

Կողմ-7 դեմ- 0 ձեռնպահ- 0

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝ 1.Սամվել Վաղարշակի Ազատյան

2. Աշոտ Ռոբերտի Վարդանյան

3. Վարդան Արարատի Ավագյան

4. Հարություն Շմավոնի Թամիրյան

5. Ալբերտ Ատոմի Պետրոսյան

6. Սարգիս Վանիկի Հարությունյան

7.Գարիկ Հարությունի Ղազարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԱԶԱՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի Գետափնյա համայնք
(093)306969, getapnya.gyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 նոյեմբերի 2016թվականի N 23-Ն

ԳԵՏԱՓՆՅԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1.Ընդունել Գետափնյա համայնքի ավագանու կանոնակարգը:

2.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու՝

23.11.2012 թվականի թիվ 8-րդ որոշումը (համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին)

27.09.2016 թվականի թիվ 17-Ն որոշումը (համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին)

Կողմ-7 **դեմ- 0** **ձեռնպահ- 0**

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝	1.Սամվել	Վաղարշակի	Ազատյան
	2. Աշոտ	Ռոբերտի	Վարդանյան
	3. Վարդան	Արարատի	Ավագյան
	4. Հարություն	Շմավոնի	Թամիրյան
	5. Ալբերտ	Ատոմի	Պետրոսյան
	6. Սարգիս	Վանիկի	Հարությունյան
	7.Գարիկ	Հարությունի	Ղազարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԱԶԱՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի Գետափնյա համայնք
(093)306969, getapnya.gyuxapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 նոյեմբերի 2016թվականի N 24-Ն

ԳԵՏԱՓՆՅԱ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 և 19 կետերի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8 և 10-րդ հոդվածների պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գետափնյա համայնքի 2017թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա/ մինչև 300 քառակուսի մետր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական / ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7.500 դրամ.

բ/ սույն կետի <ա> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15.000 դրամ.

բբ/ 501-ից մինչև 1.000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25.000 դրամ.

բգ/ 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35.000 դրամ.

բդ/ 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1.500 դրամ.

դ/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2.500 դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1.500 դրամ.

բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի <ա> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝

օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ/ նախատեսվում է միայն ցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5.000 դրամ:

4. Համայնքի տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6.000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8.000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15.000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20.000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 40.000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 90.000 դրամ:

ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6.000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8.000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15.000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20.000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 40.000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 90.000 դրամ:

5. Համայնքի տարածքում

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

բ/ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150.000 դրամ

գ/ խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլատվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 60.000 դրամ:

գա/համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5.000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8.000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15.000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20.000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30.000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 50.000 դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1.000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2.000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4.000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8.000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15.000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25.000 դրամ:

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և

վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝

տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա/ առևտրի օբյեկտների համար՝ 25.000 դրամ

բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50.000 դրամ

գ/ բաղնիքների (սաունաների) համար՝ 200.000 դրամ

դ/ խաղատների կազմակերպման համար՝ 500.000 դրամ

ե/ շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250.000 դրամ

զ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100.000 դրամ

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

դ) մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը՝ ծխախոտի արտաքին գովազդի համար՝ 3000 դրամ.

ե) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

7.1. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով:

7.2. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 5.000 դրամ

9. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000 դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10.000 դրամ:

11. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը գյուղական համայնքներում կիրառվել են 0,5 գործակցով:

12. ՏԻՄ տնօրինության տակ գտնվող հողեր հատկացնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և նման աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 դրամ

13. ՏԻՄ կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման վճար՝ 3.000 դրամ

14. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փափախող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000 դրամ:

15. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար աղբահանության վճար սահմանել՝

1/Յուրաքանչյուր բնակչի համար – 50 դրամ

2/Սպասարկման կազմակերպությունների համար – 400 դրամ

Կողմ-7 դեմ- 0 ձեռնպահ- 0

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝ 1.Սամվել Վաղարշակի Ազատյան

2. Աշոտ Ռոբերտի Վարդանյան

3. Վարդան Արարատի Ավագյան

4. Հարություն Շմավոնի Թամիրյան

5. Ալբերտ Ատոմի Պետրոսյան

6. Սարգիս Վանիկի Հարությունյան

7.Գարիկ Հարությունի Ղազարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԱԶԱՏՅԱՆ